

ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՅՈՒ «Ի ՄԵԼԻՏՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՆՏԻՈՓՈՒՅԻ» ՃԱՌԻ
ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻՆ

Բանասիր. գիտ. դոկտոր Կ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

IV դարի բյուզանդական մատենագիր, աստվածաբան և փիլիսոփա Գրիգոր Նյուսացու (335—394) մատենագրական ժառանգության զգալի մասը հայերենի է թարգմանվել գերազանցապես V—VIII դդ.։ Հայկական ձեռագրական հավաքածոներում մոտ 200 գրչագիր ընդօրինակությամբ պահպանվել է Նյուսացու 41 անուն գործ (ճառ, թուղթ, մեկնություն, դամբանական, հարցում և այլն), հիմնականում անտիպ¹։ Հայերեն թարգմանությունների մեջ իր բնույթով, բառազանձի ինքնատիպությամբ, մանավանդ հայոց հին գրականության հետ ունեցած առնչակցությամբ առանձնանում է նրա «Ի Մելիտոս եպիսկոպոս Անտիոքացի» խորագիրը կրող գործը։ Ժանրային իմաստով այն չի կարելի ո՛չ ճառ կոչել, ո՛չ էլ դամբանական։ Հայերեն թարգմանության ձեռագրերում սույն աշխատանքը մերթ խառն է կոչվում, մերթ էլ պարզապես՝ «Ի Մելիտոս եպիսկոպոս»։ Մինչդեռ հունարեն բնագրի խորագրում կա շատ հստակ ժանրային բնորոշում՝ «ἐπιστολὴς ἑστῆς» (դամբանական ճառ)²։

¹ Գրիգոր Նյուսացու գործերի հայերեն թարգմանություններից հրատարակվել են. ա) ճառ Լուսնելոյն Գրիգորի Նիսացույն եպիսկոպոսի ասացեալ ի բաղումն Տեառն Յիսուսի Քրիստոսի և ի Յովսէփ Արեմարացի—«Գովելի է ինձ և այս եկեղեցական օրէնք» (տե՛ս Գիրք եւ ճառ հոգեւոր.՝ Կ. Պոլիս, 1722, էջ 204—227)։ բ) Երանելոյն Գրիգորի, Եղբօրն Բարսղի, որ առ յաւրօրինն—«Այլ թերևս որ առ լուծեալ և բակտեալ մարմինն հայեցեալ» (տե՛ս Կնիք հաւատոյ, Ս. Լճմիածին, 1914, էջ 267—276)։ Սույն հրապարակումը Նյուսացու «Ի մարդոյ կազմութիւնն» աշխատության գլուխներից է։ գ) Երանելոյն Գրիգորի Նիսացույն, Եղբօր Բարսղի, Յաղագս՝ անասնակսն ի մեզ ախտի առ ի յանսնական բնութիւն ազգակցութեան պատճառ ունին—«Քանզի կարծեմ ի սկզբանէ յայսմանէ և զիրաքանչիւր ախտս իբրու յաղբելիք ումեմնէ ընդ մեզ կապեալ» (տե՛ս Կնիք հաւատոյ, էջ 289—293)։ «Ի մարդոյ կազմութիւնն» երկի գլուխներից է։ դ) Երանելոյն Գրիգորի Նիսացույն եպիսկոպոսի, Եղբայր Բարսղի՝ յԵրրորդութիւնն—«Զի կարգաւորապէս ցուցաւ Սրբոյ Երրորդութեանն բնութիւնն՝ ոչ իստեակեալ իւրաքանչիւր գոյութեանց» (տե՛ս Կնիք հաւատոյ, էջ 24—25)։ Հատված է համանուն ճառի սկզբնամասից։

է) Երանելոյն Գրիգորի Նիսացույն՝ Առ ի մարդանայն Տեառն—«Զայս խորհիցի, ասէ, ի մէնջ, որ է ի Քրիստոս...» (տե՛ս Կնիք հաւատոյ, էջ 348)։ Հատված է։

Նյուսացու աշխատանքի հունարեն բնագիրը բառ առ բառ հայերենի թարգմանող, ինչպես կոտեսներ, հունարենի պատճենավորման եղանակով բառեր ստեղծող հայերենի թարգմանիչը ինչու՞ չի ընկալել կամ, թերևս, հարմար չի նկատել հայերենի փոխանցել ընդգրկ ժանրային առանձնացումը դամբանական ճառ տեսքով։ Մեր առաջին թարգմանիչները նույն կերպ են վարվել «Երեք մեծ կապաղովկացիների» համաբնույթ մյուս գործերի հետ ևս։ Այսպես, օրինակ, Գրիգոր Նազիանզացու եղբորը՝ Կեսարիոսի և Բարսեղ Կեսարացուն նվիրված նահանգացու նշանավոր դամբանականները հայերենի են թարգմանվել «Ի Կեսարիոս եղբայրն իւր» և «Ի Բասիլիոս Կեսարացի» խորագրերի տակ, թեև երկու դեպքում էլ հունարենում ունենք «ἐπιστολὴς» (դամբանական) բնորոշումը։ Ասվածին պիտի ավելացնել Բարսեղ Կեսարացու 33 բնագրից կազմված «Պահոց գրքի» հայերեն թարգմանությունը, որտեղ նույնպես բնագրի ժանրային այս կամ այն պատկանելության ցուցումը թարգմանության համար պարտադիր չի նկատվել։ Թեև այսօր դժվար է ստույգ ասել, թե այդ երկերի հունարեն բնագրերի խորագրերը մեզ են հասել նախնական, հեղինակային տեսքով։ Հնարավոր է ենթադրել միջնադարյան գրիչների, հետագայում նույնիսկ հրատարակիչների միջամտություններ։ Հայրաբանական գրականությունից

Հայոց թարգմանական մատենագրության այս հուշարձանի՝ Գրիգոր Նյուսացու «Ի Մելիտոս...» դամբանական ճառի հայերեն ձեռագրերը, մյուս գործերի համեմատությամբ, շատ չեն։ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են սույն գործի ութ ամբողջական և մեկ հատվածական ընդօրինակություն։ Ձեռագրեր կան նաև Վիեննայում, Երուսաղեմում, Նոր Զուղայում, Փարիզում և այլուր։ Նշված հուշարձանի հնագույն և ամբողջական գրչագրերը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, որը և հնարավորություն է տալիս ըստ ամենայնի գնահատելու այդ հուշարձանը, արժարժեքի վերջինիս թարգմանություն տեղի, ժամանակի, բնույթի, ինչպես նաև սկզբնավորման շրջանի հայ գրականության հետ ունեցած առնչակցության այլազան հարցեր։

«Ի Մելիտոս...» դամբանական ճառը ասվել է 381 թ., Կոստանդնուպոլսում կայացած երկրորդ տիեզերական ժողովի ժամանակ, Անտիոքի նշանավոր Մելիտոս եպիսկոպոսի մահվան կապակցությամբ³։ IV դարի 80-ական թթ. արեւելյան եկեղեցու սյուններից մեկի մահվան տխուր հետևանքները պատկերացնելու իմաստով ուշագրավ կարող է լինել Մաշտոցի անվան Մատենադարանի № 996 «Ճառերն տիրում» Նյուսացու քննվող ճառի ընդօրինակության առիթով կատարված հետևյալ հիշատակագրությունը. «Արդ՝ այժմ լուսայք զասացեալսս ի մէջ, քանզի յիշեցաք զասացեալ զփոխումն երջանիկ հայրապետին՝ զորք մնացեալ զմեզ զժողովուրդ այսքան բազմութեան։ Վասն զի նա քաղաքավարեալ ի մարմնի ըստ առաքելոյն բանի՝ զինչ որ ի ոք պատերազմ պատերազմեալ զընթացսն կատարեալ զճգնութեան և զառաքինութեանն. զհաւատսն պահեաց, որ ի սուրբ երրորդութիւնն, և կա և մնա նմա արդարութեան պսակն, զոր հատուցէ յաւուր մեծի արդար դատաւորն։ Ոչ միայն նմա, այլ և որք հետեին վարուց նորա և որոշեն զանձինս յերկրաբարշ վարուց և խորհին զանդ երանութիւնսն և ուղղեցեն զշաւեղս իւրեանց ի կեանսն ի Քրիստոս Յիսուս՝ ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս»⁴։ Նյուսացին, որ նույնպես եկեղեցու նշանավոր հայրերից էր, բնականաբար, շատ ավելի խորն էր զգում կատարվածի հետեւածքները, եկեղեցուն սպաստացող վտանգի սահմանները, հոգեւոր հաստատություն շրջանակներում և դրանից դուրս դավանական խլրտումների առաջն առնելու հնարավոր ուղիները, նշանավոր սուրբ հայրերի կյանքի ու գործունեության ուսանելի դրվագները ի ցույց դնելու անհրաժեշտ եղանակներն ու ոլորտները։

Տվյալ դեպքում մեզ հետաքրքրողը Նյուսացու «Ի Մելիտոս...» դամբանական ճառի հայերեն թարգմանության հետ կապված բանասիրական-աղբյուրագիտական այլևայլ խնդիրների քննությունն է։ Հուշարձանի բնագրի և թարգմանության համեմատությունը ցույց է տալիս, որ ճառիս հայերեն թարգմանությունը հիմնականում համընթաց է հունարեն բնագրի հետ. հայերենը, կարելի է ասել, բառացի թարգմանության տպավորություն է թողնում։ Բնագրի և թարգմանության ընդհանրական կետերը դասգասելով ըստ առանձնահատկությունների կարելի է դրանք բաժանել մի քանի խմբերի.

1) Կատարված թարգմանություններում առավելապես հոգ է տարվում հայ ընթերցողին ներկայացնելու ենթադրվող անձն իր բոլոր, այսպես կոչված՝ ուսանելի կողմերով, քան ժանրը։ Եվ դա ուներ իր հիմնավորումը։ Այս կամ այն նշանավոր հոգևոր գործչի անձի ու գործի ուսանելի դրվագներն էին ի ցույց հանվում և ոչ թե ստեղծագործության ժանրային առանձնահատկությունները մատնացուցվում։ Եվ այդ նպատակին էին ծառայեցվում ոչ միայն խորագրերը, այլև հայերեն թարգմանությունների հիշատակարան-հիշատակագրություններն անգամ։

2) Բյուզանդագիտական գրականության մեջ սույն գործի հեղինակային պատկանելության հետ կապված որևէ շփոթ չկա։ Մինչդեռ հայերեն ձեռագրերում և հատկապես միջնադարյան մեկնողական գրականության մեջ, ինչպես նկատել ենք այլ առիթով, այն մերթ դիտվել է Գրիգոր Նազիանզացու աշխատություն, երբեմն էլ Գրիգոր Նյուսացու գործ։ Այդ մասին տե՛ս Կ. Մ. Մուրադյան. Գրիգոր Նազիանզացին հայ մատենագրության մեջ. Երևան, 1983, էջ 52—54։

3) Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 996, էջ 304 ա—բ։

1. Հայերեն թարգմանությունում կան բայական կապակցություններ (ան-
յկմ և դիմավոր), որոնք հունարեն բնագրի բառացի թարգմանության եղանա-
կով պահպանել են սկզբնագրի ձևերն ու գեղարվեստական արտահայտչամի-
ջոցները.

«մախանքն կողոպտեցին» — «μαχανήν απεπλήρωσαν»⁵ (853)

«տապան ընդունին» — «ταπὸν ἐπέδωκον» (856)

«տապանական սլարէր» — «ταπὸν ἐχόρευον» (861)

«տապանակ առաքեցին» — «ταπὸν προεπέμψαν» (856)

«լեզու...խաւսի» — «λέγου εχέου» (856)

«սրտի զրեալ» — «καρδίαν ἐγγεγραμμένην» (856)

«ձայնեցից բանիւ» — «ὁππερφωνήσω τὸ λόγιον» (853)

«անդարդացաւ զեղեցկութիւնդ» — «ἀπενομαζήθη τὸ καλόν» (856)

«ցամաքեցաւ խոտն» — «ἐξήρπασθη ὁ γοργός» (856)

«ոչ սղայր ի միթարութիւն» — «οὐ προσημασθε παρὰλήριον» (857):

2. Քննվող հուշարձանի հայերեն թարգմանությունում կարելի է առանձ-
նացնել անվանական արտահայտությունների մի խումբ, որոնք դարձյալ հու-
նարենի հիմքի վրա են առաջացել և ուղղակի բառական թարգմանության հետե-
վանք են.

«աշացն հանդարտութիւն» — «ἀσπαστὸν γαλήνην» (856)

«շրթանցն ժպտումն» — «γέλοιος χαίμεν» (856)

«յաշաղանք շարութեանց» — «ῥαπαγία χαλκ» (856)

«զամպ տրտմութեանս» — «ἀντίης νεφέλην» (852)

«թշուառութեան մառախոլով» — «συμφορὰς γνόφω» (852)

«հոգոյս աշաւք» — «ψυχῆς σφύαλας» (852)

«սպասաւորութիւն բանի» — «ὁππερσεύον τὸν λόγον» (852)

«ձայն արտիւս» — «φωνήν...τὸν πῆλιν» (852)

«հասարակաց մարմին» — «κοινὸν σώμα» (852)

«զհոգեւոր հարսանիսն» — «πνευματικὸν...γαμήλιον» (852)

«զրանիցն դաւիթս» — «ἀνὴρ ἑδούκ» (854):

3. Քննվող գրական հուշարձանում կան հունարենի նմանությամբ միևնույն
բառակազմական սկզբունքով կազմված բառեր, որոնք, դատելով նոր հայ-
կազյան բառարանագիրների հղումներից, չնչին բացառությամբ, հայոց թարգ-
մանական և ինքնուրույն մատենագրությունը ծանոթ են մեկ կամ երկու կիրա-
ռությամբ: Այդպիսի բառերից են.

աղախական — «δουλεύω» (853)

այլալեզու — «ετερογλωσσος» (861)

անարատ — «γρηγορ» (857), «αμειπτος» (856)

անգիտութիւն — «αγνοησια» (861)

անդարդանալ — «ἀπενομαζήθη» (856)

անհաւատալի — «πιστοσύμενος» (861)

անհրահանգ — «αμελετήτος» (857)

անշարժ — «ακίνητος» (861)

անպտուղ — «αχαρπτος» (861)

աստուածապաշտ — «θεοσεβής» (856)

բազմամասնաբար — «πολυμερῶς» (861):

բարեմառանգութիւն — «εὖχληρίαν» (852)

Թվարկված օրինակներն իրենց համապատասխան կիրառություններով
հիմնականում V դարի թարգմանական մատենագրությունից են քաղված

⁵ Հունարենը հղում ենք ըստ PG մատենաշարի (տե՛ս հ. 46, էջ 852—864), իսկ հայերեն
բաղումները՝ ըստ մեր կազմած քննական բնագրի հիմք ձեռագրի (ՄՄ, ձեռ. № 823, էջ 9բ—
15ա): Ինչս և մնացած կետերում վկայակոչում ենք մեր ձեռքի տակ եղած ոչ բոլոր օրինակները:

(Ս. Դիրք, Եփրեմ, Բարսեղ, Նազիրանզացի, Նյուսացի, Ոսկեբերան և այլն): Ուրիշ վկայություններ չունենալու պատճառով ոչ թարգմանական գրականությունից օրինակներ են ընտրվել X—XII դդ. գրական հուշարձաններից, երբեմն էլ նյուսացու երկերի հայերեն թարգմանությունների ազդեցությամբ հայտնված վաղ-շրջանի ինքնուրույն գրականությունից (տե՛ս Մովսես Խորենացու օրինակները): Հասկանալի է, որ Նյուսացու «Ի Մելիտոս...» ճառի թարգմանությանը դիմելու դեպքում բառարանագիրները անգարդանալ և բառեծառանգություն բառերի բացատրության առիթով չէին բավարարվի Հովհաննես Դրասխանակերտցուց և Սարգիս Շնորհալուց քաղված մեկական օրինակներով:

4. Կան դարձյալ հունարենի հիմքի վրա առաջացած բառեր, որոնք անձանոթ են նոր հայկազյան բառարանագիրներին: Ահա այդ բառերն իրենց համապատասխան կիրառություններով.

ա) «Այլ ինքնադեմ հանդիպի Աստուծոյ» (էջ 108) — «ἀλλ' αὐτοπροσωπῶς ἐντυγχάνει τῷ Θεῷ»⁶: Հայկազյան բառարանագիրները վկայակոչում են ինքնապեղ, ինքնադիմարա բառերը, բայց ոչ ինքնադեմ: Հասկանալի է, որ վերջինս հունարեն αὐτοπροσωπῶς բառի թարգմանությունն է: Բայց, որքան մեզ հայտնի է, այլուր վկայված չէ:

բ) «Յաճախագոյն հալելով բիւրամարդ բազմութիւնն» — «καταπύχυνον»⁷: Զարգացած ճիշդ է: Հալ ինքնուրույն և թարգմանական գրականություն հեջ, դատելով համաբարբառային գրականությունից. բիւրամարդ բառի ուրիշ կիրառություն արձանագրված չէ: Սույն եզակի օրինակին չեն անդրադարձել նաև Հայկազյան բառարանագիրները, թեև նրանք ձեռքի տակ ունեցել են «Ի Մելիտոս...» ճառի հայերեն թարգմանությունը: Դժվար չէ կոհհել, որ բիւրամարդ բառը առաջացել է հունարենի πυρίανθρωπος-ը թարգմանելու ճանապարհով և միանգամայն ուղադրության արժանի բառական միավոր է:

գ) «Զիարդ քաջն Դաւիթ բազմամասնաբար եւ յոգնաւրիմակապէս...»⁸ «πῶς ὁ καλὸς Δαβὶδ πολυμαρὸς καὶ πολυταρπὸς»¹⁰: Տվյալ պարագայում մեր առեւիքը յոգնաւրիմակապէս բառի մասին է: Հայկազյան բառարանում մեկական օրինակ-վկայակոչությամբ հղվել են յոգնօրինակ և յոգնօրինակաբար իմաստամոտ բառերը, բայց չկա առաջարկվող յոգնաւրիմակապէս ընթերցումը: Բայց կիրառության այլ օրինակ մեզ ծանոթ չէ, ուստի մեկնաբանության միակ սկզբնաղբյուրը մնում է վերոբերյալ վկայակոչությունը: Մի բան պարզ է, որ այն հունարեն πολυμαρὸς բառի հայերեն թարգմանությունն է, որը վկայված չէ նաև Առձեռն բառարանում և առհասարակ անձանոթ է հայ բառարանագրությանը¹¹:

Նույնքան ուշագրավ է, որ այդ երկը բավական սերտ կերպով կապվում է Մովսես Խորենացու նշանավոր «Ողբի» հետ: Խորենացու «Պատմության» սկզբնաղբյուրներին անդրադարձած Նախորդ սերնդի հայագետներից շատերը տարբեր ձեռագրական ու բառարանագրական աղբյուր-հղումների հենքի վրա արձանագրել են, որ բյուզանդական մատենագրի սույն ձառը ծանոթ է եղել Խորենացուն, որից օգտվել է նա իր նշանավոր «Ողբը» շարադրելիս¹²:

6 PG, t. 46, p. 861.

7 ՄՄ, ձեռ. № 823, էջ 17ա:

8 PG, t. 46, p. 861.

9 ՄՄ, ձեռ. № 823, էջ 17բ:

10 PG, t. 46, p. 861.

11 Նախորդ ինքնադեմ և բիւրամարդ բառերը վկայված են Առձեռն բառարանում:

12 Ն. Բյուզանդացի. «Քննասէր», պրակ երկրորդ, Ստոբճում, 1887, էջ 60, 61:

Կ. Պատմական. Քննություն ուրույն Մովսես Խորենացու. — «Հանդես ամսօրյա», 1891, էջ 362—364, Գր. եւ աւաթյանց. Մովսես Խորենացի և յոր աղբյուրները («Հավելված Արա-

Նյակայն մի բան պարզ է, որ նմանության մեծ ու փոքր հատվածների բացահայտված և չբացահայտված օրինակներից անկախ Խորենացու «Ողբը», ինչպես նկատվել է, «զրված է Գրիգոր Նյութագու հայտնի դամբանական ճառի խոր ազդեցության տակ»¹³։ Ընդ որում՝ խոսքը երկու ստեղծագործությունների մանրախնդիր առանձնահատկությամբ պայմանավորված ձևական ընդհանրություն մասին չէ, այլ բուն նյութի, շարադրանքի, հիմնական ասելիքի։ Արդ՝ փոքրերն էլ ընդհանրացնել այս բնույթի նմանությունները։

ա) Երկու դեպքում էլ ողբերգականը իրական է, առարկայական. Նյութագու համար եղբերականը դավանական բուռն վեճերի պայմաններում արևելյան եկեղեցու ծանր վիճակն է՝ կապված Անտիոքի նշանավոր Մելիտոս եպիսկոպոսի անակնկալ մահվան հետ (Ողորմիմ քեզ, եկեղեցիդ... Անտիոքու)¹⁴։ Խորենացուն հուզողը հայոց թագավորության վերացումն է, ազգային հոգևոր հաստատության երերուն վիճակը (Ողորմիմ քեզ, եկեղեցի Հայաստանսայց)¹⁵, երանելի ուսուցիչների՝ Սահակի և Մաշտոցի մահը։

բ) Հարս ու փեսայի փոխաբերական պատկերը միանգամայն նույն են-թատկարստն ու նպատակադրումն ունի թե՛ Նյութագու և թե՛ Խորենացու երկերում։

գ) «Պատերազմն հերձուածողական» նույնական մտահոգությամբ է պաշարել թե՛ բյուզանդական մատենագիրն և թե՛ մեր Պատմահորը, որովհետև երկու դեպքում էլ խոր անհանգստության պատճառը մեկ է՝ մի դեպքում «որ դարավարն լինի, ոչ ոք է»¹⁶ (Նյութացի), մյուս դեպքում՝ ըստ Խորենացու՝ «խորհրդականն չէ ի միջի, որ խրատէր և յարմարէր ի պատերազմ»¹⁷։

դ) «Ո՛ւր», «զի՛նչ», «ո՛վ» և նման սկսվածքով հարցադրումները թե՛ Նյութագու և թե՛ Խորենացու համար ոչ միայն պատասխան չեն ակնկալում, այլև իր՝ նց մեջ բովանդակում են նույն հարցումի ժխտական պատասխան-լուծումը։

ե) Երկու հուշարձաններում էլ քննադատության, տարակուսանքի ու զրգոհության բուն պատճառը տեսանելի է շրջապատող իրականության ոլորտում, իրական է և ոչ վերացական։

զ) Կավատեսության, պայծառ ապագայի գովքը համադրվող երկերում պիտի փնտրել անցյալի փառավոր դրվագները վերապատմելու գրական եղանակի մեջ։

Այսպիսով, վերոբերյալ, բառական, ոճական, իմաստային նմանությունները հնարավորություն են տալիս պնդելու, որ Խորենացին իր նշանավոր «Ողբը» շարադրելիս ծանոթ է եղել Նյութագու քննվող դամբանական ճառի հայերեն թարգմանությանը։ Ինչ խոսք, Խորենացու պատրաստությունը (բյուզանդական մատենագրությունն ու լեզուն հիմնավորապես իմանալը) հիմք է տալիս մտածելու, որ Պատմահայրը Նյութագու աշխատանքին կարող էր ծանոթ լինել նաև բնագրով։ Մյուս կողմից գայթակղիչ հանգամանք կարող է հանդիսանալ թարգմանական գործի համար հատուկ պատրաստվող Խորենացու իսկ վկայությունը. «Ես այր եմ ծերացեալ... և անպարապ ի թարգմանու-

րատի», 1897 թ. նոյեմբեր և դեկտեմբեր), էջ 536—538։ Գ. Չարհանալյան. Հայկական հին գրություն. Վենետիկ, 1897, էջ 365։ Г. Халатьянц. Армянские Аршакиды. М., 1903, т. II, материалы, с. 140—143. Ն. Ակինյան. Մովսես Խորենացու Ողբը Ղևոնդ երեցի Պատմության վերջաբանն է. — «Հանդես ամսօրյա», 1930, № 1—2, էջ 7—41։ Ե. Տեր-Մինասյան. Պատմա-բանասիրական հետազոտություններ. Երևան, 1971, էջ 217, 218։

¹³ Ն. Տեր-Մինասյան. նշվ. աշխ., էջ 217։

¹⁴ ՄՄ, ձեռ. № 823, էջ 12բ։

¹⁵ Մովսիսի Խորենացու Պատմություն Հայոց. Տիգրիս, 1913, էջ 358, հմտ. «Քննասեր», 1887, էջ 60։ Գր. հալաթյանց. նշվ. աշխ., էջ 536։ Ն. Ակինյան. նշվ. աշխ., էջ 27։

¹⁶ ՄՄ, ձեռ. № 823, էջ 9բ։

¹⁷ Մովսես Խորենացի, էջ 360, հմտ. Գր. հալաթյանց. նշվ. աշխ., էջ 537, 538։ Ե. Տեր-Մինասյան. նշվ. աշխ., էջ 218։

թեանց»¹⁸։ Այսուհանդերձ՝ հիմնավոր կովաններ կան պնդելու, որ հորենացին օգտվում է նյութացու դամբանական ճառի հատկապես հայերեն թարգմանությունից։ Որո՞նք են այդ կովանները։

ա) նյութացին գրում է. «Հարսն համբերէր ողջախոհութեամբ զամուսնութիւնն պահելով... ոմն սեղեխաբար յանդգնէր յանառատ յառազաստն։ Այլ հարսն ոչ աղտեղանայր...»¹⁹։ Այս նույն միտքը առկա է հորենացու մոտ. «Հարսնդ համբերեցեր՝ ողջախոհութեամբ զամուսնութիւնն պահելով... ոմն սեղեխաբար յանդգնեալ յարձակեցաւ յանառատ առազաստղ և հարսնդ ոչ աղտեղացար...»²⁰։ Այս նույնական հատվածներից յուրաքանչյուրը հարս բառի կիրառության երկուական օրինակ է տալիս՝ հարսն համբերէր, հարսն ոչ աղտեղանայր, մինչդեռ նյութացու ճառի հունարեն բնագրում ունենք նման մեկ կապակցություն. «Αλλ' ἡ νεύουσα οὐκ ἐπιδύνατο...»²¹ (=ալ հարսն ոչ աղտեղանայր)։

բ) նյութացի. «լաւագոյն էր ընդ Քրիստոսի լինել»²²։

հորենացի. «Ընդ Քրիստոսի լաւ է նոցա բնակել»²³։ Վկայակոչված հատվածների նմանությունը ակնհայտ է և լրացուցիչ մեկնաբանության անհրաժեշտություն չկա։ Տվյալ պարագայում մեր ասելիքը ընդգծված բառերի որոշ տարբեր երանգներին է վերաբերում։ Նյութացու լաւագոյն և լինել բառերի դիմաց հորենացու «Ողբում» համապատասխանաբար ունենք լաւ և բնակել։ Նյութացու ճառի բնագրում ասված է՝ «ἡ νεύουσα ἦν τὸ γυναικῶ εἴνα»²⁴, որի ճշգրիտ արտացոլումն առկա է հին հայերեն թարգմանության մեջ։ Հասկանալի է, որ նյութացու լաւագոյն և լինել ընթերցումները բնագրի «νεύουσα»²⁵ և εἴνα²⁶ (εἶμι) բառերի թարգմանությունն են։ Արդ՝ որոշ տարբերության հրանգով հանդերձ՝ հորենացու միտքը շատ ավելի ընդհանրական է նյութացու հայերեն թարգմանության հետ, քան հունարեն բնագրի։

գ) նյութացի. «Ո՛վ թշուառական պատմութեանն»²⁷։

հորենացի. «Աւագ թշուառական պատմութեանս»²⁸։ Այս նույնական արտահայտությունների հիմքը նյութացու ճառի հունարեն բնագիրն է. «Ὁ δυνάτωχτος ἀγγεῖλαις»²⁹, որտեղ, ինչպես տեսնում ենք, պատմութեանն ընթերցումն դիմաց ունենք ἀγγεῖλαις³⁰ (ἀγγεῖλον) լուր, տեղեկություն, զեկույց։ Արդ՝ նյութացու ճառի հայերեն թարգմանության և հորենացու «Ողբի» նմանության այս և նախորդ օրինակներից կարելի է եզրակացնել, թե հորենացին օգտվել է բյուզանդական մատենագրի «Ի Մելիտոս...» ճառի հայերեն թարգմանությունից և ոչ թե նույնի հունարեն բնագրից։ Հակառակը պնդելու դեպքում հարկադրված կլինենք ընդունելու, որ նյութացու խնդրո առարկա ճառի թարգ-

¹⁸ Մովսես Խորենացի, էջ 353։

¹⁹ ՄՄ, ձեռ. № 823, էջ 14բ-15ա։

²⁰ Մովսես Խորենացի, էջ 359, հմտ. «Քննասէր», 1887, էջ 61։ Գր. Խալաթյանց, Նշվ. աշխ., էջ 537։ Ն. Ակիսյան, Նշվ. աշխ., էջ 28։

²¹ PG, t. 46, p. 858.

²² ՄՄ, ձեռ. № 823, էջ 15ա։

²³ Մովսես Խորենացի, էջ 360, հմտ. Գր. Խալաթյանց, Նշվ. աշխ., էջ 537-538, Ե. Տեր-Միսայան, Նշվ. աշխ., էջ 218։

²⁴ PG, t. 46, p. 852.

²⁵ DPC, I, 980.

²⁶ DPC, I, 464.

²⁷ ՄՄ, ձեռ. № 823, էջ 13ա։

²⁸ Մովսես Խորենացի, էջ 360, հմտ. Գ. Халатъ-янц. Указ. соч., с. 141.

²⁹ PG, t. 46, p. 856.

³⁰ DPC, I, 18.

մասնիչը և նույն երկի հունարեն նախօրինակից օգտվող Խորենացին միմյանցից բոլորովին անկախ օգտագործում են նույնառձ արտահայտություններ ու կապակցություններ, մի բան, որ գրեթե անկարելի է³¹։ Խորենացին միջնադարյան դրական գործիչ է և, բնականաբար, առանձնապես հոգ չի տանում քաղում-հղումները մասնավորեցնելու ուղղությամբ, մասնավանդ եթե դրանք շարավրանքի փաստական կողմին չեն վերաբերում։ Նյութագու գործից կատարված Խորենացու քաղումները այդպիսիք չեն։ Այդուհանդերձ՝ Խորենացին մի առիթով արձանագրում է. «Որպէս ոմն նախ քան զմեզ իմաստասիրեաց»³²։

Սակայն բյուզանդական մատենագրի երկին ծանոթ լինելու հանգամանքը այն թյուր տպավորությունը չպետք է թողնի, թե Խորենացին սոսկ բանաբարություն է տարված և որ նրա հռչակավոր «Ողբը» ստեղծագործական առումով քիչ է ինքնուրույն։ Նման մոտեցումը ամենից առաջ նշանակում է բնավ չպատկերացնել այն հարուստ ու բազմաժանր թարգմանական մատենագրությունը, որը նախորդել է մեր ինքնուրույն գրականությանը և դարեր շարունակ գոյատևել է վերջինիս զուգընթաց։ Հայտնի է, որ մեր ինքնուրույն մատենագրության երևելի ներկայացուցիչները, այդ թվում և առաջին հերթին Խորենացին, միաժամանակ մեր նշանավոր թարգմանիչներն են եղել։ Թարգմանելու և ինքնուրույն գրական երկ ստեղծագործելու պրոցեսները մեզանում տնական ժամանակ համընթաց են եղել։ Այնպես որ ասորի կամ հույն մատենագիր այս կամ այն գործի թարգմանիչը կարող էր թարգմանվող նյութի լուսնահավակությունը ակնհայտ նմանությամբ վերարտադրել նաև ինքնուրույն՝ երկ ստեղծագործելիս՝ ամենևին չզգալով դրա օտարամուտ լինելը։ Խորենացին, թվում է, այս իմաստով շատ լավ ապացույցներ կարող է տալ։ Ավելին, Խորենացու «Պատմության» օրինակը ցույց է տալիս, որ Նյութագու երկի հայերեն թարգմանությանը ծանոթ լինելու իրողությունը նրան չի զրկել ինքնուրույնությունից, իր ասելիքը չուրովի մատուցելու Խորենացիական հնարավորությունից։ Նույնիսկ նմանությունների մեջ Խորենացին որոշակիորեն տարբերվում է սկզբնաղբյուրից։ Վկայակոչենք այս կարգի ընդհանրության մեկ-երկու օրինակ։

ա) Նյութագին եկեղեցու տխուր վիճակը նկարագրելիս օգտագործում է «ո՛վ թշուառական պատմութեանն»³³ արտահայտությունը։ Խորենացին նման առիթով ու նրա հետևությամբ ունի «աւա՛ղ թշուառական պատմութեանս»³⁴։ Խոսքը տվյալ դեպքում ով և աւաղ հուզական երանգների տարբերությանն է վերաբերում։ Նյութագու թարգմանիչը բնագրի օմեգան (ω) թարգմանել է բառացի նշանակությամբ՝ ով։ Դա միակ դեպքը չէ. նա, չնչին բացառությամբ, սլոգան է վարվել նաև մնացած դեպքերում (ով շար, ով եկեղեցիդ, ով թշուառական, ով շարեացս և այլն)։ Մինչդեռ Նյութագու ճառի հայերեն թարգմանությունից օգտվող Խորենացին նախընտրել է գաղմանք, գալուստ, վրդովմունք, վիշտ, տրամուրդուն ու թախիժ արտահայտող աւաղ տարբերակը։ Իրականում տվյալ մտքի, արտահայտության համար ճիշտը Խորենացու քնտրությունն է։ Փաստորեն բյուզանդական մատենագրի հայերեն թարգմանությունն աչքի առաջ ունենալով հանդերձ՝ Պատմահայրը բնագրի, ասելիքի իր ընկալումն ունի և նմանությունների մեջ էլ, ասվեց, տարբեր է սկզբնաղբյուրից։

31 Կամ, թերևս, կարելի է մտածել, որ Նյութագու ճառի թարգմանիչը լինելով հանդերձ՝ Խորենացին, սակայն, գրական-թարգմանական տարբեր մոտեցում է դրսևորում։ Բյուզանդական մատենագրի երկը թարգմանելիս նա աշխատում է անպայման մնալ բնագրի սահմաններում, արագատորեն վերարտադրել բնագրի յուրաքանչյուր միտքը, մինչդեռ սեփական շարադրանքում իր իսկ թարգմանությունից օգտվելիս նույն երևույթի շուրջ դրսևորում է այլ մոտեցում։ Սա նույնպես նվազ հավանական ենթադրություն է։

32 Մովսես Խորենացի, էջ 359։

33 ՍՄ, ձև. № 823, էջ 13ա։

34 Մովսես Խորենացի, էջ 360։

բ) Խորենացին հայոց աշխարհի անմխիթար վիճակին անդրադառնալիս միաժամանակ հիշում է իր երանելի ուսուցիչներին և այդ առիթով օգտագործում է «զիարդ գմիտս իմ և զլեզուս պնդեցից»³⁵ արտահայտությունը, որն ընդհանուր եզրեր ունի Նյուսացու «զիարդ բռնադատեցից զլեզուս»³⁶ ձևակերպման հետ՝ «...βίαιος γλωσσῶν»³⁷։ Առաջին հայացքից թվում է, թե այս և նման բնորոշումների պնդեցից և բռնադատեցից այլիմաստ բաներից մեկը պիտի ճիշտ համարել և մյուսը սրբագրել ըստ նախորդի։ Բայց իրականում երկուսն էլ ճիշտ են իրենց տեղերում։ Նյուսացու հատվածում բռնադատեցից-ը հունարենի «βίαιος» բառն է, որն ունի «ուժով, բռնությամբ, ուժ գործադրելով»³⁸ իմաստները և միանգամայն տեղին է օգտագործված։ Մինչդեռ Խորենացու խոսքը իր երանելի ուսուցիչների հիշատակին անդրադառնալուց առաջ միտքն ու լեզուն պնդելու մասին է։ Ինչպես տեսնում ենք, հիմքում ընդհանրական այս ձևակերպումները բուն ասելիքի մեջ միանգամայն տարբեր են։

գ) Ծայր առած դավանական վեճերին անդրադառնալիս Նյուսացին գրում է. «Պատերազմն զմեզ շուրջ պաշարէ, պատերազմն հերժուածողական»³⁹։ Նույնպիսի մտահոգություն ունի նաև Խորենացին՝ աչքի առաջ ունենալով բյուզանդական մատենագրի հիշյալ ձևակերպումը. «Պատերազմ զմեզ շուրջ պաշարէ... մարտք ի հերժուածողաց»⁴⁰։ Նյուսացու ճառի հունարեն բնագրում պատերազմ բառի երկու կիբառության դիմաց էլ ունենք «...βίαιος»⁴¹, որից հետևում է, թե բյուզանդական մատենագրի հայերեն թարգմանիչը հարազատ է մնացել բնագրին և երկու դեպքում էլ նշված բառը թարգմանել է պատերազմ։ Խորենացին չի կրկնել սեզբնադբյուրի ձևակերպումը՝ պատերազմ բառի երկրորդ կիրառության համար րնտրելով նույնի մաբա հոմանիշ-տարբերակը։ Կատարվածը սոսկ կրկնությանից խուսափելու նպատակով համար բառընտրության օրինակ չէ, այլ, ավելի շուտ, երևելթի ճշմարիտ գնահատման խորենացիական ըմբռնում։ Դավանական հողի վրա առաջացած անկանոն խլրտումները Խորենացին բնորոշում է մաբա տերմինով, Նյուսացին՝ պատերազմ բառով։

Նյուսացի—Խորենացի ընդհանրական հատվածներում կարելի է վկայակոչել այս բնույթի նոր օրինակներ ևս։ Սակայն՝ դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ վկայակոչված դուգահեռ ձևերի ուշադիր քննությունը հիմք է տալիս ասելու, որ սեզբնադբյուրների հետ ունեցած նմանությունների շրջանակներում էլ Խորենացին առանձնանում է ոչ միայն իր ասելիքով, այլև մատուցման եղանակով ու ոճի ինքնատիպությամբ։ Նյուսացու թարգմանիչը աշխատում է ամեն կերպ տեղավորվել բնագրի բառերի ու արտահայտությունների շրջանակներում, ձգտելով հնարավորին չափ դերժ մնալ միջամտություններից ու բառական հավելումներից։ Նա ջանում է գտնել հունարենի համապատասխան հայերեն համարժեքը, իսկ չգտնելու կամ չնախընտրելու դեպքում բառապատճենման եղանակով կարողանում է ստեղծել ենթադրվող բառը կամ համապատասխան տերմինը։ Բոլորովին այլ են Խորենացու ստեղծագործական խառնվածքը, բնագրի հետ աշխատելու, այս կամ այն թարգմանությունից օգտվելու նրա նախընտրած եղանակները։ Նյուսացու երկի հայերեն թարգմանությունից օգտվող Խորենացին երբեք այս կամ այն միտքը հեղինակային

³⁵ Նույն տեղում, էջ 360, 361, հմմտ. Գր. Խալաթյանց. նշվ. աշխ., էջ 360։

³⁶ ՄՄ, ձեռ. № 823, էջ 10ա։

³⁷ PG, t. 46, p. 852.

³⁸ Տե՛ս DPC, I, 295։

³⁹ ՄՄ, ձեռ. № 823, էջ 9բ։

⁴⁰ Մովսես Խորենացի, էջ 360, հմմտ. Գր. Խալաթյանց. նշվ. աշխ., էջ 537, 538։ Ծ. Տեր-Մինասյան. նշվ. աշխ., էջ 218։

⁴¹ PG, t. 46, p. 852.

կառուցվածքով ու բառային կազմով նույնությամբ չի վերաբնակեցնում իր շարադրանքի մեջ: Նա աշխատում է օտարամուտ շերտերը հարստացնել, ընդարձակել տեղական, հայկական անհրաժեշտ նյութի իր իսկ շարադրանքով, դրավոր ու բանավոր աղբյուրներից քաղված շահեկան ալլաբնույթ տեղեկություններով:

Աչքի առաջ ունենալով «երեք մեծ կապադոկացիների», մասնավորապես Գրիգոր Նազիանզացու ճառերի հայերեն թարգմանությունների հետքերը Խորենացու «Հայոց պատմության» վրա, հայ բանասիրության մեջ անցյալում Պատմահորը Նազիանզացու ճառերի թարգմանիչ ընդունելու փորձ է արվել: Նույն հաջողությամբ նրան կարելի է համարել նաև Նյուսացու ճառերի թարգմանիչ, որովհետև նման ենթադրության փաստական հիմքը այս դեպքում էլ մնում է նույնը: Այսպիսի ընդհանրացման համար նպաստավոր գործոն է գիտվել նաև Խորենացու Բյուզանդիայում կրթություն ստանալը, բյուզանդական մատենագրությունն ու լեզուն հիմնավորապես իմանալը: Հայագիտության մեջ Խորենացու մասին ուղղակի արձանագրվել է. «Ի Նազիանզացվո ճառից փոխառնալ ցիր և ցան կտորները կցուցնեն թե ի հայրենիս դառնալեն առաջ արդեն կարդացած և թարգմանած էր այդ ճառերն, ուստի՝ թե՛ Ողբը գրած ժամանակ և թե՛ Պատմությունը խմբագրած միջոցին՝ յուր թարգմանություններն հատվածներ կներմուծեր. և այս՝ ոչ միայն ի Նազիանզացվո, այլ և ի Նյուսացվո...»⁴²: Այս տեսակետը բավական տարածված է հայագիտության մեջ և բանավոր եղանակով պաշտպանվում է նաև այսօր:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Խորենացուն Նյուսացու ճառերի թարգմանիչ չի կարելի համարել մի շարք պատճառներով: Ամենից առաջ պիտի նկատել, որ այդ մասին չկա, չի պահանջվել որևէ հիշատակություն ո՛չ Խորենացու գործերում, ո՛չ էլ այլուր: Նյուսացու «Ի Մելիտոս...» ճառի հայերեն թարգմանության վրա հնարավոր չէ ցույց տալ Խորենացուն բնորոշ լեզվի ու ոճի, արտահայտչաբանակի որևէ նմուշ: Նյուսացու թարգմանիչը, ասվեց, աշխատում է ամեն կերպ տեղավորվել բնագրի շրջանակներում, մինչդեռ Խորենացին ստեղծագործողի, գրական երկ ստեղծողի իր խառնվածքով չի կարող պարփակվել բնագրի հաղորդածի ոլորտում և միջամտում է ինքնաբերաբար: Այս իմաստով կրկին հիշելի են վերևում վկայակոչված օրինակները, ուր Նյուսացու ճառի հայերեն թարգմանության ռվ-ը Խորենացին ընթերցում է աւաղ, պնդեցից-ը՝ բռնադատեցից, պատերազմ-ը՝ մարտ: Պարզորոշ երեվում է, որ Խորենացին բաղնիստության իր սկզբունքն ունի, որը հապես տարբեր է Նյուսացու թարգմանիչի մոտեցումից: Ի վերջո՝ Նյուսացու ճառերի հայերեն թարգմանությունը պիտի գոյություն ունենար, հայ իրականության մեջ տարածված լիներ մինչև Խորենացու «Ողբի» կամ «Հայոց պատմության» գրվելը, որից այնուհետև օգտվելու հնարավորություն ունենար Պատմահայրը:

Այնուամենայնիվ, ե՞րբ է հայերենի թարգմանվել Նյուսացու «Ի Մելիտոս...» դամբանական ճառը: Այս հարցի պատասխանը ուղղակիորեն կապվում է մեկ այլ հարցի հետ՝ ե՞րբ է գրվել Խորենացու «Ողբը», որտեղ Նյուսացու ճառի հայերեն թարգմանությունից քաղումներ են կատարվել: Հայագիտության մեջ տիրապետող կարծիքի համաձայն՝ «Ողբը Խորենացուն երեւի գրեալ նախ քան զպատերազմն Վարդանանց»⁴³: Եթե մի փոքր ավելի մասնավորենք այս միտքը, ապա պիտի ընդունենք, որ «440-ին կամ 441-ին» երանելի ուսուցիչների մահվան «ցավի ու վշտի թարմ տպավորության տակ»⁴⁴ է գրվել Խորենացու «Ողբը»: Առաջարկվող թվականը նորովի քննելու և նոր փաստերով հաստատելու կամ մերժելու անհրաժեշտություն չենք տեսնում: Եթե վիճելի է «Ողբի» գրության առաջարկվող ժամանակը, ապա Նյուսացու մեղ

⁴² Կ. Պատմահայր. Նշվ. աշխ., էջ 363, հմտ. «Քննասեր», 1887, էջ 30, 31:

⁴³ «Քննասեր», 1887, էջ 1:

⁴⁴ Ե. Տեր-Մինասյան. Նշվ. աշխ., էջ 217, հմտ. Կ. Պատմահայր. Նշվ. աշխ., էջ 363:

հետաքրքրող ճառի թարգմանությունը պիտի տեղավորել մինչև 480-ական թթ., այսինքն հորենացու «Հայոց պատմության» ստեղծման ժամանակահատվածում, որը ավելի հաստատուն է և մեծ տեղաշարժերի անհրաժեշտություն չի պարտադրում:

Նյութացու քննվող ճառի հայերեն թարգմանությունը Բարսեղ Կեսարացու և Գրիգոր Նազիանզացու որոշ երկերի («Վեցարեայ», «Ի Բասիլիոս Կեսարացի») թարգմանությունների հետ կրկին հաստատում է այն պնդումը, թե մեղանում, այսպես կոչված, դասական թարգմանություններին զուգընթաց կատարվել են նաև հունաբան թարգմանություններ և որ հունաբան թարգմանությունները առանձնացնելու և անպայման մի քանի տասնամյակով հոտանելու անհրաժեշտություն չենք տեսնում: Ավելին, գասական և հունաբան կոչված թարգմանությունների ոչ քիչ դրվագներ կարելի է ցույց տալ միևնույն երկում: Այս իմաստով լավ օրինակ է «Վեցարեայի» հայերեն թարգմանությունը (V դարի առաջին կես): Բնագրի և թարգմանության որոշակի տարբեր հարաբերությունների շատ օրինակներ կան նույն հեղինակի «Պահոց գիրք» անվանված ճառերի և թղթերի ժողովածուի մեջ: Նույն ժամանակահատվածում թարգմանված Նազիանզացու «Ի Բասիլիոս Կեսարացի» երկը հունաբան թարգմանության ուղադրավ օրինակ է⁴⁵: Հունաբան թարգմանությունների նույն շարքին է պատկանում նաև «Ի Մելիտոս...» դամբանական ճառը, որի թարգմանության առանձնահատկություններին անդրադարձանք վերևում: Համաբնույթ թարգմանության ուրիշ օրինակներ ևս կան Նյութացու գործերից:

Արդ՝ ինչպե՞ս բացատրել այս երևույթը: Թվում է, հավանական մեկնաբանության երկու եղանակ կա. ա) կամ պիտի ընդունել, որ V դարում մեղանում կային մեկից ավելի գործող թարգմանական դպրոցներ, ուստի և առկա թարգմանությունների լեզվաոճական ու բառազանձային ընդգծված առանձնահատկությունները պայմանավորված են տարբեր դպրոցների ոչ միօրինակ թարգմանական նախասիրություններով: բ) կամ էլ կարելի է ենթադրել, որ գրեթե համաժամանակյա այդ թարգմանությունները կատարվել են միևնույն մշակութային հաստատության ոլորտում, սակայն տարբեր ուսումնասիրություն ստացած ու ոչ միանման գրական ճաշակի տեր թարգմանիչների ձեռքով: Հիմքեր կան ընդունելու երկրորդ բացատրությունը:

ДРЕВНЕАРМЯНСКИЙ ПЕРЕВОД СОЧИНЕНИЯ ГРИГОРИЯ НИССКОГО «ЭПИТАФИЯ ЕПИСКОПУ МЕЛИТИЮ» И МОВСЕС ХОРЕНАЦИ

Доктор филол. наук К. М. МУРАДЯН

Резюме

Византийский теолог и философ Григорий Нисский (335—394 гг.) является одним из крупнейших представителей патристической литературы IV в. Значительная часть его литературного наследия была переведена на древнеармянский язык в V—VIII вв. Среди его армянских переводов особое место занимает «Эпитафия епископу Мелитию Антиохийскому». Критическое исследование этого памятника позволяет сделать некоторые выводы:

1. Имеются лексические и стилистические сочетания (личные—безличные), которые, представляя собой буквальный перевод соответствующих сочетаний греческого текста, сохранили формы и средства художественной выразительности ори-

⁴⁵ Այդ մասին տե՛ս Կ. Մ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 104—126:

տիպալ. В памятке имеются реалии, представляющие собой своеобразные примеры буквального перевода.

2. К числу характерных особенностей армянского перевода «Эпитафии» относятся факты калькирования словосложения оригинала временами же создания производных слов наподобие греческого.

3. В исследуемом армянском переводе имеются слова и словосочетания, неизвестные армянской литературе периода ее возникновения и, следовательно, составителям Нового толкового словаря армянского языка.

4. Мовсес Хоренаци, судя по данным в его «Истории Арменин», знал литературное наследие Григория Нисского и пользовался именно армянским переводом рассматриваемого сочинения византийского автора. Сопоставление адекватных отрывков открывает возможность критики обоих текстов—сочинения Нисского и «Истории» Хоренаци.